ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

21 դեկտեմբեր 2023թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ

Թույլտվության վերաբերյալ

Պարոն Կոստանդյան.

Հայտնում եմ Ձեզ, որ Փամբակ համայնքի Վահագնի գյուղում 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակիչներին՝ որպես ժամանակավոր կացարան, համայնքապետարանի կողմից տրամադրվել է 17 փայտե տնակ: Ժամանակի ընթացքում այդ տնակները կոռոզիայի հետևանքով դարձել են բնակության համար ոչ պիտանի: Այժմ վերոնշյալ բնակիչները դիմել են ինձ՝ իրենց կողմից տարիներ շարունակ օգտագործվող տնակները /կամ տնակներից մնացած պիտանի շինանյութը/ իրենց տրամադրելու՝ նվիրաբերելու խնդրանքով, քանի որ տնակները մինչ օրս հաշվառված են համայնքապետարանի հաշվեկշռում: Հաշվի առնելով տնակների վաղեմության և պիտանելիության ժամկետները /տեղափոխման անհնարինությունը և աննպատակահարմարությունը/ առաջարկում եմ շահագործման ժամկետները անցած վերոնշյալ տնակները նվիրաբերել դրանք փաստացի տնօրինող Վահագնի գյուղի բնակիչներին:

Կից ներկայացնում եմ բնակիչների դիմումները:

Առդիր 17 դիմում:

Զեկուցող՝ **Սուրեն Վարդումյան**